

5. Բիզանդացի Ն. Նորայր, *Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱ-ժԷ դարուց*, Ժնն, 2000:

6. Խաչատրեան Լալիկ, *Ներսէս Մկրտչեան. «Սենական լեզուները եւ հայերէնը. Եր. 2004», «Պատմաքանասիրական հանդէս», 2006, թիւ 1, էջ 328-331:*

7. Յովհաննիսեան Լ. Ծ., *Հայերէնի իրանական փոխառութիւնները*, Երեւան, 1990:

8. Յովհաննիսեան Լ. Ծ., *Հայերէնի իրանական փոխառութիւնները, բ.գ.դ. գիտական աստիճանի հայցելու ատենախօսութեան սեղմագիր*, Երեւան, 1994:

9. Յովհաննիսեան Լ. Ծ., *Հայ-իրանական նոր ստուգաբանութիւններ*, Երեւան, 2005:

10. Ղազարեան Ռ. Ս., *Միջին հայերէնի բառապաշարը*, Եր., 1993:

11. Ղազարեան Ռ. Ս., Աւետիսեան Հ. Մ., *Միջին հայերէնի բառարան*, Եր., 2009:

12. Ղազարեան Ս., *Միջին հայերէն*, գիրք Ա., Եր., 1960:

13. Մալէք Մոհամմադի Մոհամմադ, *Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի լեզուն եւ ոճը»* թեկնածուական ատենախօսութիւն:

14. Մալէք Մոհամմադի Մոհամմադ, *Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում վկայուած փոխառեալ բառապաշարի խնդրի շուրջ*, «Բազմավէպ», 2004, էջ 206-237:

15. Մկրտչեան Ն., «Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան. Միջին հայերէնի բառարան. հտ. Բ, Եր., 1992», «Պատմաքանասիրական հանդէս»:

16. Մուրադեան Պարոյր, *Պատմութիւն պղնձէ քաղաքի» գրոյցի հայկական եւ վրացական պատումների ու նրանց փոխաչարաքերութեան շուրջ*, «Բանբեր Մատենադարանի», 1962, թիւ 6:

17. Զահուկեան Գ., *Հայոց լեզուի պատմութիւն (նախագրային ժամանակաշրջան)*, Երեւան, 1987:

18. Վարդանեան Ե. Հ., «Ռ. Ս. Ղազարեան, Հ. Մ. Աւետիսեան. Միջին հայերէնի բառարան, հտ. Ա, Եր., 1987», «Պատմաքանասիրական հանդէս», 1988, թիւ 3, էջ 206-214:

19. دکتر نظر ریز (نامه لغت ، اکبر ی علی دهخدا ، یدیشه جعفر دیس دکتر و نی مع محمد ، تهران دانشگاه انتشارات ، 1373

ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Թ-Ժ ԴԱՐԵՐՈՒՄ (աղբիւրագիտական դիտարկումներ)

Ալեքսան Յակոբեան

Յօդուածի հիմքում դրուած է Կարէն Իւզբաշեանի (1927-2009) լիշատակին նուիրուած «Հայաստանի եւ Աղուանքի թագաւորութիւններն ու Բիզանդական կայսրութիւնը Ժ. դարում» հայ-ֆրանսիական գիտաժողովում (Երեւան, 20-22 սեպտեմբեր, 2010) ընթերցուած զեկուցումը

428 թ. Արշակունեաց թագաւորութիւնը վերացելուց յետոյ Սասանեանները Մեծ Հայքի հիւսիսարեւելեան Արցախ եւ Ուտիք նահանգներն ընդգրկեցին Իրանի տէրութեան մի նորաստեղծ մարզպանութեան կազմի մէջ, որն ստացել էր Առան (Աղուանք, Ալբանիա, Ռան, Ռանի) անունը. վերջինս վերցուել էր Բուն Աղուանքի (Ալբանիայի) թագաւորութեան անունից (այն ձեւաւորուել էր Բ. ա. Ա. դ. սկզբին՝ տարածուելով Կուր գետի ստորին Հոսանքից հիւսիս՝ մինչեւ Կովկասեան լեռները եւ Կասպից ծով)՝ Դրանից յետոյ՝ մինչեւ Ե. դ. վերջ, Աղուանք անունն ամբողջովին տարածուեց նաեւ Կուրի աջափնեակի Հայկական Արցախ եւ Ուտիք նահանգների վրայ²: Արաբներն իրենց ստեղծած Արմի-

նիյա կուսակալութեան (ոստիկանութեան) մէջ պահպանեցին տուեալ վարչա-աշխարհագրական անուանակարգը (նոմենկլատուրան), եւ Արցախն ու Ուտիքը շարունարան կում էին համարուել Արմինիայի Առան (Աղուանք) հատուածի մաս³, որի տարածքի Քրիստոնեայ բնակչութեան համար շարունակուած էին գործել Աղուանից իշխանի եւ Աղուանից կաթողիկոսութեան առանձին հաստատութիւնները: Բայց իսլամիստիկան թուլացման դարաշրջանում Հայոց Արեւելից կողմերում ձեւաւորուեցին հզօր աւատական իշխանութիւններ, որոնք Թ. դ. վերջին մաս կազմեցին ոչ թէ Բուն Աղուանքի (Շաքի մայրաքաղաքով), այլ՝ Մեծ Հայքի Բագրատունեաց թագաւորութեան: Դրանցից առաւել նշանաւոր դարձան իս-հայկական իշխանութիւնները (Կենտրոնում), չէնը (Արցախ նահանգի կենտրոնում), Գորոզուն (յետագայում՝ Դիզակ, Արցախի հարաւում) եւ Փառխոսը (աւելի վաղ՝ Գարգման, Արցախի եւ Ուտիքի հիւսիս-արեւմուտքում):

Խաչէնի իշխանատոհմը, ըստ առկայ աղբիւրների համադրութեան, սերում էր վաղ միջնադարեան Մաղիւացի կոչուած իշխանութիւնից⁴, բայց արդէն որդեգրել էր

¹ Մանրամասն տե՛ս Բ. Ուլուբաբեան, Հիւսիս-արեւելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, - ԲԵՂ, 1975, հոմ 2, էջ 149-164; Բ. Յարութիւնեան, Մեծ Հայքի թագաւորութեան հիւսիս-արեւելեան մարզերի վարչա-քաղաքական կազմութիւնը 387-451 թթ., - ԲԵՂ, 1976, հոմ 2, էջ 77-95; Բ. Ա. Արուտոյան, Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишиэ, - «Кавказ и Византия», вып. 1, Եր., 1979, էջ 19-35; А. А. Аюпян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Եր., 1987, էջ 109-114; И. Г. Семенов, Этнополитическая история Восточного Кавказа в III-VI вв., Автореф. дисс. ... канд. ист. наук, Махачкала, 2002, էջ 14:

² Հմմտ. А. А. Аюпян, Албания-Алуанк, էջ 142-149:

³ Վերջին անգամ մանրամասն տե՛ս Ա. Եղիազարեան, Արարական խալիֆայութեան Արմինիա վարչական շրջանը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրութիւն), Եր., 2010, էջ 31-33, 36-37, 134-135:

⁴ Տե՛ս Բ. Ուլուբաբեան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, - ԲԵՂ, 1971, հոմ 1, էջ 182-186:

ուրիշ ինքնանունում՝ Առանշահիկ: 837 թ. Սահլ Սմբատեան խաչենցի իշխանը (արաբական աղբիւրներում կոչուած Սահլ իբն Սիմբաթ, իսկ Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան» հայերէն թարգմանութեան մէջ՝ Սահակ Հակկազուն⁵) իր տիրոջ թներում ձերբակալեց Ատրպատականի ապստամբ ազանդաւորների առաջնորդ Բաբեկին եւ դրա դիմաց խալիփայութիւնից մեծ պարգեւների ու շնորհների արժանացաւ՝ այդ թուում, ըստ Մովսէս Դասխուրանցու (կոչուած նաեւ՝ Կաղանկատուացի), ստանալով Հայոց, Վրաց եւ Աղուանից աշխարհների (այսինքն՝ ամբողջ Արմինիայ կուսակալութեան) իշխանաց իշխանի պաշտօնը⁶: Դա, ըստ ամենայնի, փոխանցիկ պաշտօն էր, քանի որ, Դասխուրանցու մօտ պահպանուած տեղեկութեան համաձայն, այն արդէն 1-2 տարուց տրուեց «տերանց տէր» անուանուած ոմն Յովհաննէսի⁷, իսկ Բու-

5 Ա. Յակոբեան, *Խաչէն-Խոխանաբերդի ամրոցը եւ նրա իշխանատիրը* Թ.-ժ.Գ. դարերում, - ՀԱ, 2010, էջ 74:

6 Ժամանակագրութիւն Տեանց Միխայէլի Ասորու պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 365:

7 Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Եր., 1983 (մեր կազմած նոր քննական բնագրի որոշ սրբագրումներով, այսուհետեւ՝ ՊԱ), գիրք Գ, գլ. Ի, էջ 330 («Եւ ի նոյն ամիս [5 տող վերեւ] յերկու հարիւր ութսուն եւ վեց թոյն Հայոց (=837/838 թ.) ճոյն տէրն Սահլի Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բաբեկն՝ զմարդախողտող, աշխարհաւեր, արիւնարբու գազանն, եւ ետ ի ձեռն ամիրսմանոյ: Եւ ընդ վաստակոցն սոնոյ յարքունեացն վարձս բարիս: Չի առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար»): ՊԱ, Գ.ի, էջ 330-331 («Ի տոյն ամի [3 տող վերեւ] երկու հարիւր ութսուն եւ ետ թուականին Հայոց (= 1.05.838-30.04.839 թ.) տէրանց տէրն Յովհաննէս, որ Հայոց եւ Վրաց եւ Աղուանից եղել տէր, եւ խնդրեաց յարքունեացն կրկին անգամ գերաւարիտոյ, [նա] տալի] փաստոս [իմա՝ կուսակալ/ երիցս այսոցիկ աշխարհաց»): Այս փաստաւորը (ինչպէս եւ նախորդը) պահպանուել է «Պատմութիւն Աղուանից»-ի միայն B խմբի ձե-

ղայի արշաւանքից շատ առաջ այդ պաշտօնը վարում էր կենտրոնական Հայաստանի Բագրատունիներից Աշոտ Մասկերի որդի Բագարատը (միւս որդին էր Սմբատ սպարապետը՝ արաբական աղբիւրներում նաեւ Աբու-լ-Աբբաս ալ վարիսի)⁸. 861 թ. իշխանաց իշխան դարձաւ Սմբատի որդի Աշոտը⁹, որն արդէն պահպանեց այդ պաշտօնը մինչեւ վերջ, իսկ 885-ին փոխարինեց խալիփայի կողմից ճանաչուած եւ վերջինիս գերակայութիւնը ճանաչող ու նրան հարկատու թագաւորի կարգաւիճակով: Գրակահանութեան մէջ արմատաւորուած կարծիքի համաձայն՝ վերը նշուած Յովհաննէսը Սահլի որդին էր, որը Բաբեկին գերելու

նագրերում, որը բաժանում է 2 ենթախմբի՝ *crv* եւ *bl*. տե՛ս Ա. Յ. Յակոբեան, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*, - «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 110-144. Ա. Ա. АКОПЯН, *Албания-Алуанк*, էջ 150-161. Ա. Յակոբեան, *Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ (Արցախ եւ Ուտիք)*, Վիեննա-Եր., 2009, էջ 111-112, ծնթ. 32: 1983 թ. հրատարակիչ Վ. Առաքելեանը տուել է այս փաստաւորի միայն *crv* գրչագրերի ընթերցումները, որտեղ դարձել է շփոթեցնող՝ «գերաւար, խոյտա, Փատոս»՝ ճիշտը *bil* գրչագրերում է:

8 Տե՛ս, օր.՝ Իբն Միսկալայի եւ Ատ Տաբարիի մօտ. «[Յուսուփ իբն Մուհամմէդի մօտ] գնաց [Արմինիայի] իշխաններից մէկը՝ Բագարատ [Բուքրատ] որդի Աշոտի, որ իշխանաց իշխան [բատրիկ ալ բատարիկա] անունն էր կրում» (*Արաբական մատենագրեր Հայաստանի մասին*, հասարակ եւ թարգմանեց Բ. Խալաթեանց, Վիեննա, 1919, էջ 77, 97): Հմմտ. Ն. Աղոնց, *Բագրատունեաց փառքը*, Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948, էջ 123:

9 Թովմա Արծրունու խօսքերով՝ «քանզի հաստացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուանել զիշխանս Հայոց, զՎրաց եւ զԱղուանից» (*Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց*, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 206. Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Մ. Հ. Գարբիճեան-Մելիքեանի, Եր., 2006, էջ 230):

պահին արաբական աղբիւրներում կոչուած է Մուալիա¹⁰: Սակայն միանգամից նշենք, որ *ատ-Տաբարին* եւ *Իբն ալ-Ասիրը* Մուալիա եւ կոչուած Սահլի այն որդուն, որին գերեվարել էր Բուղան, այսինքն՝ մեզ քաջածանօթ Ատրներսեհին¹¹: Ընդունուած է նաեւ համարել, որ Դասխուրանցու յիշատակած «տերանց տէր» եւ «Սահլի որդի» Յովհաննէսն է յիշուած Մեծարանից Ս. Յակոբավանքի Հնագոյն խաչքարի պատուանդանի վրիճարում. «:ՅԲ: Թուակահանութեանս Հայոց []=853/854 թ.], ի ժամանակս Յովսէֆի Աղվանից իշխանի, ես՝ Սողոմոն Մեծարանց եպիսկոպոս, կանգնեցի...»¹²:

Տեղին նշենք, որ վերջերս Կ. Յուկերմանը, վերլիչելով Յ. Մարկուարտի արտա-

10 Տե՛ս, օր.՝ Ն. Աղոնց, *Բագրատունեաց փառքը*, էջ 129-130; V. Minorsky, *Caucasica IV: 1. Sahl ibn-Sumbāt of Shakkī and Arrān*, - BSOAS, 1953, XV/3, էջ 509-510: Հմմտ. Ա. Յակոբեան, *Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ*, էջ 266-268:

11 *Tarikh at-Tabari*, Edition critique par M. Abu-l-Fath Ibrahim, T. IX, Le Caire, 1968, էջ 54: Իբն ալ Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ա. Տէր-Ղեռնդեանի (*Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մատար անունն էր Սիմբաթ իբն Աշուտ, ինչպէս նաեւ Մուալիա իբն Սահլ իբն Սիմբաթին՝ Առանի բատրիկին*): Հմմտ. Ա. Յովհաննիսեան, *Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան*, հտ. Ա., Երեւան, 1957, էջ 120 («Իբն ալ Ասիրը նշում է Սահլի որդուն նրա արաբական՝ Մուալիա, իսկ Դասխուրանցին նրա քրիստոնէական՝ Ատրներսեհ անունով»): Խաչէնի Առանշահիկների տոհմագրական ամբողջական աղիւսակը տե՛ս Ա. Յակոբեան, *Խաչէն-Խոխանաբերդի ամրոցը եւ նրա իշխանատիրը*, էջ 71-170 (ներդիր):

12 Դիւան հայ վիճագրութեան, պր. V, *Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարեան*, Երեւան, 1982, էջ 12 (հ^ր 1): Բնագրերում բոլոր ընդգծումները մերն են, որտեղ ենք հետեւեալ փակագծերը. [] - վերականգնում. { } - կորսուած հատուած. // - անւերոյր տառ:

յայտած վարկածը, հնարաւոր համարեց Սահլ Սմբատեանին համարել Միւնեաց իշխան Սահակ Հայկեանի հետ եւ, այդպիսով, վերջինիս որդի Գրիգոր Սուփանին ներկայացնել իբրեւ Ատրներսեհի աւագ եղբայրը¹³: Սակայն տուեալ վարկածն ամբողջորդին անտեսում էր Ստեփաննոս Օրբէլեանի եւ այլ պատմիչների հաղորդած մեծածաւալ եւ այլ պատմիչների հաղորդած մեծածաւալ աղբիւրագիտական նիւթը, ըստ որի Սահակը որդին էր խաչէնի հետ ոչ մի կապ չունեցող, Թ. Գ. սկզբի Միւնեաց գահերէց իշխան վասակի: Տե՛ս, օր.՝ «Յետ վասակայ խան վասակի: Տե՛ս, օր.՝ «Յետ վասակայ խան զհայրենի ժառանգութիւն իւր բաժանեն զհայրենի ժառանգութիւն իւր բաժանեց երկու որդիքն՝ Փիլիպպէ եւ Սահակ: Եւ ինի Փիլիպպէ գահերէց իշխան Միւնեաց. եւ Սահակ աւնու բաժին զգաւառն նեաց. եւ Սահակ աւնու բաժին զգաւառն զու երիս որդիս... Յետ սակաւուց մեռանի եւ Սահակ ի պատերազմի Հաւլ ամիրային եւ Սահակ ի պատերազմի մերձ կաւակերյեզը Հուրազգան գետոյն մերձ կաւակերյեզը աւանին [=851 թ.!, յիշենք, որ Բուղան տոյ աւանին 855-ին - Ա. Յ.], եւ թո՛ւ Սահլին գերի տարաւ 855-ին - Ա. Յ.), եւ թո՛ւ զու ժառանգ ինքեան զԳրիգոր որդի իւր՝ Սուփան կոչեցեալ»¹⁴: Կարելի է նաեւ յատկաւորել, որ Մովսէս Դասխուրանցին Գրիգոր լեզել, որ Մովսէս Դասխուրանց է 852-ով, որը Սուփանի մահը թուագրում է 852-ով, որը «...եւ Բուղայի գալու նախորդ տարին էր. «...եւ տէր Սուփան վախճանեցաւ ի վայոց ձոր ի նոյն ամի [քիչ վերեւ] ի լնուլն երրորդ նոյն ամի [քիչ վերեւ] ի լնուլն երրորդ հարիւր թուոյ Հայոց - Ա. Յ.]: Եւ ի միւս տարին եկն Բուղլա ի Հայս»¹⁵:

13 C. Zuckerman, *À propos du Livre des cérémonies*, II, 48, - «Travaux et Mémoires», T. 13, Paris, 2000, էջ 570-571: Հմմտ. J. Marquart, *Osteuropäische und ostasiatische Streifzüge. Ethnographische und historisch-topographische Studien zur Geschichte des 9. und 10. Jahrhunderts*, Leipzig, 1903, էջ 457:

14 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի *Պատմութիւն տանն Միւնեաց*, Մոսկուա, 1861, գլ. ԾԳ, էջ 217: Ըստ արաբական աղբիւրների՝ Բուղան Հայաստանից հեռացաւ Հիշրէի 241-ին, որն ընկնում է 855-856-ի սկիզբ (Ն. Աղոնց, *Բագրատունեաց փառքը*, էջ 129, ծնթ. 1):

15 ՊԱ, գիրք Գ, գլ. Ի, էջ 332-333:

է առել մէկ այլ՝ աղբիւրների վկայութիւններին հակառոյ վարկածի վրայ եւ հնարաւոր է համարել Համամի հետ Սահլի թոռան՝ Գրիգոր Ատրներսեհեանի համադրումը (այդ վարկածն առաջ էր քաշել դեռեւս Ա. Կրիմսկին)³⁷: Փորձեր են եղել նաեւ՝ Թովմայի բնագրի Շաքէ-ն նոյնացնելու Կուրից հարաւ ընկած որեւէ տեղանուն հետ՝ Արցախում (Սլ. Սարգսեան)³⁸, կամ անգամ՝ Սիւնիքում (Զ. Բունիաթով)³⁹:

Սակայն, թուում է, թէ աղբիւրագիտական նիւթի այս ակնյայտ հակասութեան համար կարելի է սպառնիչ բացատրութիւն ստանալ միմիայն այն դէպքում, եթէ պարզապէս ընդունենք, որ գործ ունենք Թովմայի շարադրանքի բովում ի յայտ եկած, այսպէս ասած, «տեխնիկական» վրիպման հետ: Այսինքն՝ կարծում ենք, որ

ծնթ. 18 («Ակնյայտ սխալ է Մուսիսի ու Համամի Բարեպաշտի նույնացումը Նիկ. Ադոնցի կողմից... քանի որ Մուսիսի տաժանակրութեան գնաց Արաբիա, իսկ Համամը մնացել էր Կովկասի լեռնային տիրացաւ իշխանութեան»):

37 Տե՛ս Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 74-82 (թէպէտ՝ *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. III, էջ 89, ծնթ. 22-ում ստիպուած է եղել վերապահում կատարել. «Գրիգորի նույնացումը Համամի հետ կարծու է աւելի լուրջ հիմնաւորում»): Հմմտ. Ա. Ե. Կրիմսկի, *Страницы из истории Северного или Кавказского Азербайджана (классической Албании)*, Шаки, «Памяти акад. Н. Я. Марра», Сборник статей, Москва-Ленинград, 1938, էջ 374-375. նույնը աւելի ուշ՝ Ս. Ե. Երեմյան, *Албания IX-XI вв.*, Очерки истории СССР. Период феодализма. IX-XV вв., Москва, 1953, էջ 648-649; Ա. Ն. Թեր-Լեւոնյան, *Notes sur le Saké-Kambečan (I^{er}-XIV^e s.)*, REArm., T. XXI (1988-1989), էջ 324-326 (վերահրատ. Ա. Տեր-Ղեւոնդեան, *Յոդուածների ժողովածոյ*, Երեւան, 2003, էջ 674-676); Ս. Ե. Թումանով, *Manuel de généalogie et de chronologie*, էջ 200:

38 Ս. Սարգսեան, *Խաչէնի ամրոցները*, Ստեփանակերտ, 2002, էջ 22:

39 Յ. Մ. Բунятов, *Азербайджан в VII-IX вв.*, Баку, 1965, էջ 184-190; նույնի՝ *Ещё раз о локализации Шаки (в связи с публикацией Гурама Гумбы, — «Известия АН Азерб. ССР», Серия истории, философии и права, 1987, № 1, էջ 117-119:*

վասպուրականցի պատմիչի բանաւոր կամ գրաւոր աղբիւրը Բաբեկին ձերբակալած Սահլին յիշատակել է հէնց որպէս «խաչէնոյ տէր» (գրաւոր աղբիւրի տարբերակում «Խաչէնոյ» գաւառանունը կարող էր նաեւ աղճատուած լինել), բայց պատմիչն իրեն լրիւ անծանօթ այդ տեղանունը փոխարինել է ինչ-որ չափով ծանօթ (բնականաբար՝ ոչ շատ լաւ) անուամբ՝ «Շաքէոյ տէր»: Յիշենք, որ «Խաչէն» գաւառանունը դեռեւս ծանօթ էր նաեւ Թովմայի ժամանակակից Դրասխանակերտցուն, որը մէկ անգամ յիշատակուած է լոկ այդ անունով ամբողջ («յամրոցին Խաչէնոյ»)՝⁴⁰: Փաստօրէն, կենտրոնական Հայաստանի հեղինակներից առաջինը կաթողիկոս Անանիա Մոկացին է, որ 958 թուականին գրում է այդ անունով «գաւառի» մասին, ուր ինը տարի առաջ

40 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց, էջ 127-128 («Իսկ Բուխայի երթեալ՝ ըմբռնէ զմեծ իշխանն Ատրներսեհ, որ բնակեալ էր յամրոցին Խաչէնոյ եւ զայլ եւս զհամազգիս նորա: Եւ անտի չուեալ զայլ ի գաւառն Գարդմանայ, եւ պատնէշ եւ պաշարունն շուրջ զԳարդման բերդին եղեալ՝ ըմբռնէ անտի եւ զիշխանն Գարդմանայ զԿտրիճն՝ ի կալանս կապանաց արկեալ: Եւ անտի եւս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում եւ Կոն առնանէին զնա, որ ի նախնոյ իրմէ Սեւկոյ՝ Սեւորդիք ազգքն ապա ի նեղապատիր լեալ առ ի նմանէ՝ ըմբռնի ի ձեռն նորա հանդերձ համազգեօք իրովք...»): Yovhannes Draxanakerte'i, *Histoire d'Arménie*, Գլ. 26, էջ 190: Համեմատելու համար բերեմք նաեւ Ասողիկի՝ հիմնականում Դրասխանակերտցոյ քաղուած վկայութեան բնագիրը (գիրք Գ, գլ. Բ, էջ 107). «...կալաւ /Բուղան/ զամեանայն իշխանս Հայոց. զիշխանն Արծրունեաց Աշոտ՝ զհայր Դերեմկին, եւ զպարապետն Հայասն Արիւնեաց վասակ, եւ զԿտրիճն՝ Գարդմանայ իշխան, եւ զիշխանն Խաչէնոյ Ատրներսեհ, եւ զԵսայի՝ Ադուանից իշխան, եւ զիշխանն Սեւորդեաց զՍտեփաննոս, որում Կոնն կոչէին...»:

ինքն այցելել էր անձամբ (նա յիշում է նաեւ «Խաչինայ» վանքը)⁴¹:

* * *

Համամ-Յովհաննէս Բարեպաշտ Բագրատունու ջանքերով Ադուանից թագաւորութեան վերականգնումը ուսումնասիրողներն, ինչպէս տեսանք, հիմնականում թուագրել են Թ. դ. վերջին տասնամեակով՝ չկարողանալով հաստատապէս ճշտել տարին եւ համարելով, որ այն ուղիղ նշուած է աղբիւրներում⁴²: Սակայն թուում է, թէ Մովսէս Դասխուրանցու ժամանակագրական հերթականութեամբ շարադրուած նշումների ուշադիր քննութեամբ կարելի է նկատել, որ պատմիչի ձեռքի տակ եղած

41 Տե՛սն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Ադուանից, էջ 134 («Գնացաք յաշխարհն Ադուանից, եւ հասեալ ի գաւառն Խաչէնոյ՝ ընդ առաջ եղել մեզ մեծ եւ փառատր, աստուածապահ եւ բարեպաշտ տէր Գրիգոր իշխան... հրովարտակս գրէր յամեանայն գլխատրս աշխարհին՝ առնուլ հրաման՝ առնել ժողով հանդերձ մեաք ի տան իւր ի Խաչէան գաւառի», «Հայր Մանուշակ՝ Խաչինայ վանական»):

42 Տե՛ս, օր.՝ Ն. Ադոնց, *Բագրատունեաց փառքը*, էջ 131 («տակաւն թագ չէր կապել 893 թուին»); Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Գ, Եր., 1946, էջ 25 («թագաւոր էր 894 թուին»); Ս. Գ. Բարխուդարեան, *Արցախի, Շաքիի եւ Փանիսոսի իշխանութիւնները IX-X դարերում*, էջ 68 («Սմբատ Բագրատունու օծումից լետոյ 885-894 թթ. միջեւ»); Ա. Ե. Կրիմսկի, *Страницы из истории Северного или Кавказского Азербайджана*, էջ 376; Յ. Մ. Բунятов, *Азербайджан в VII-IX вв.*, էջ 189; Բ. Ա. Ուլուբաբեան, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 80 («885 թ., Աշոտ Ա-ի հետ միաժամանակ»); Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. III, էջ 25 (գլխի հեղինակ՝ Բ. Ն. Անաբեկեան. «Աշոտ Ա-ի օրօք, մի՞նչէ 887 թ.»); Ա. Ն. Թեր-Գեւոնյան, *Армения и Арабский халифат*, Ер., 1977, էջ 239 («Թ դ. վերջին»); *Очерки истории Грузии*, т. II, Тбилиси, 1988, էջ 274 («893 թուականին»); յղումը՝ Գ. Գ. Սարգսեան, *Из политической истории Армении IX-XII вв.*, «Магн»., 1967, № 3, էջ 70-71); Ս. Զուքերման, *À propos du Livre des cérémonies*, էջ 568 («894 թ. վերջին - 895 թ. սկզբին»):

աղբիւրում⁴³ Համամի թագաւոր հռչակուելը եղել է թուագրուած, եւ դա եղել է Հայոց Յնի (342) թուականը (=893/894): «Պատմութիւն Ադուանից»-ի Գ.իա գլխում նախ ասուած է Հայոց թագաւորութեան վերականգնման մասին («Երեք հարիւր երեսուն եւ վեց թուին [=887/888 թ.] եղեւ Աշոտի Բագրատունու նստուցանել զաթու թագաւորութեանն իւրոյ ի մէջ Հայ թագաւորութեանն յարաբերի՝ յաստանեայց»), ապա յիշուած է արաբների յատուանեայցը («Իսկ գալուստ 893 թ. արշաւանքը (հասկ գալուստ 893 թ. արշաւանքը) զաշխարհն ընդ Տաճկին ի Հայս եւ գրաւել զաշխարհն ընդ լծով ծառայութեամբ հարկաց երեք հարիւր լծով ծառայութեամբ թուին [=893/894 թ.] լիքառասուներկու թուին [=893/894 թ.] լիքանէր», որն աւարտուեց Գէորգ Գառնեցունէր»), որն աւարտուեց Գէորգ Գառնեցունէրով («ըմբռնեալ եղեւ հայրապետ գերեվարմամբ (ըմբռնեալ եղեւ հայրապետն Հայոց Գէորգիոս, ի կապանս երկաթի տն ածաւ ի Պարտաւ»): Եւ անմիպարփակեալ՝ ածաւ ի Պարտաւ»): Եւ անմիշապէս դրանից յետոյ խօսուած է Ադուանից թագաւորութեան վերականգնման մասին Համամի կողմից, ով նաեւ կարողացաւ սին Համամի կողմից, ով նաեւ կարողացաւ Սաջեան («Սաջիկ») ամիրայի ձեռքից ազատել կաթողիկոսին մեծ փրկագնով (իսկ իրեն կաթողիկոսին մեծ փրկագնով պարականուած, ըստ ամենայնի, արաբների պահանջում, ըստ ամենայնի, արաբների պահանջած հարկի կամ դրա պահանջուած չափի վճարումով, որը գոնէ սկզբնապէս, ինչպէս կարելի է ենթադրել, հրաժարուել էր պէս կարելի է ենթադրել, հրաժարուել էր անել Սմբատ Ա-ն). «Ապա բարեպաշտն Համամ, որ եւ Ադուանից եղեւ թագաւոր, մամ, որ եւ Ադուանից թագաւորութիւն նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Ադուանից Համամ նորոգէ⁴⁴, որպէս

43 Ժամանակագրորէն դասարտուած ողջ հատուածի (գիրք Գ, գլ. ԺԲ-ԺԳ, ԺԵ-ԺԶ, ԺԸ-ԺԹ) հիմնական աղբիւրը համարում ենք մեզ ամբողջութեամբ չհասած (այլ միայն՝ Մովսէս Դասխուրանցու եւ Ստեփաննոս Օրբելեանի քաղաքաւարագրում եւ Ստեփաննոս Օրբելեանի Մաշտոց գրած կտորներով) Հայոց կաթողիկոս Մաշտոց (տե՛ս Ա. Յակոբեան, *Պատմա-աշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտութիւններ*, էջ 268-272):

44 ՊԱ Ե խմբի գրչագրերում (belrv) տանն Ադուանից նորոգեաց փխ տանն Ադուանից Համամ նորոգէ (a):

է, թէ Աղուանից կաթողիկոսների շարքում Յովհաննէսն, անկախ անգամ այս ակնյայտ ժամանակավրէպ նշումներից, չէր կարող լինել աւելի վաղ, քան Մովսէս Դասխուրանցու օրերում իշխած վերջին՝ Տէր Մովսէս կաթողիկոսը, որի աթոռակալութեան 6 տարիներն, ըստ առկայ թուերի՝ ընկնում են 982-988 թթ. («Տէր Դաւիթ՝ ամս 2 [6], սա առ ձեռնադրութիւն յԱնանիայէ՝ Հայոց կաթողիկոսէ [իմա՝ 958 թ.]։ Տէր Պետրոս՝ ամս ԺԸ [18], յեպիսկոպոսութենէն Գարդմանայ։ Տէր Մովսէս՝ ամս 2 [6], յառաջնորդութենէն Փառխոսայ վանաց»)141: ԺԲ դարի վերջերին Աղուանից կաթողիկոսացանկի լրացմանը ձեռնարկած Մխիթար Գօշը, որի տեղեկացուածութիւնը ԺԱ դ. սկզբի իրողութիւններին, իհարկէ, զիջում էր Դասխուրանցու իմացածին Ժ դ. երկրորդ կէսի (այսինքն՝ իր ապրած ժամանակի) մասին, Տէր Մովսէսից յետոյ դնում է Տէր Մարկոսին, ապա Տէր Յովսէփին՝ առանց նշելու նրանց ժամանակները (տուեալ տեղեկատուութիւնը Գօշից քաղել են Կիրակոս Գանձակեցին եւ յետագայ ցուցակագիրները)142: Վերջինս, ըստ Ուռհայեցու տեղե-

յաթոն սրբոյն Գրիգորի, եւ ձեռնադրեցին յաթոն կաթողիկոսութեան Հայոց գտեր Ստեփանոս [969-971, գահընկէց արուած վահան Ա Սիմեոնու հակառակորդը]՝ զայր աստուածագգեսց... նստուցանեն գնա հայրապետ Հայոց հրամանաւ եւ օրհնութեամբ տեսոն վահանայ [!], որ էր իսկ գլուխ ժողովոյն կաթողիկոսն Աղուանից տէր Յովհաննէս, ընդ ժամանակս վալից՝ Յունաց թագաւորին [976-1025], եւ Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց արքայից [1017/1018-1041], եւ Սեմեթերիմայ [990-1021]՝ որոյն Ապուսանիլի, որոյն Աշոտոյ, որոյն Դերենկանն, որոյն Գագկայ Արծրունեաց՝ յազգէն Ասրասարայ»):

141 ՊԱ, գիրք Գ, գլ. ԻԳ, էջ 347: Հմմտ. Ա. Ա. Акопян, *Албаня-Алыанк*, էջ 215-216, 277:
 142 Տե՛ս Հ. Ղ. Ալիշան, *Հայաստան*, հտ. Բ, վե՛նետիկ - Ա. Ղազար, 1901, էջ 385. ՊԱ, Յաւե՛լուած Բ, էջ 351 («տէր Դաւիթ՝ ամս 2, տէր Պետրոս՝ ամս ԺԲ, սորա ի կենդանութեան հրաժարեալ յաթոնոյն, յաջորդէ յաթոն իւր գտէր Մովսէս՝ վահանկան ի Փառխոսոյ: Իսկ գկնի տեսոն Մովսէսի կայաւ զաթոն հայրապետութեան այ-

կութեան (մեծ հաւանականութեամբ՝ նոյն Յակոբոս Սանահնեցուն յանգող)՝ մասնակցել է եւ նախագահել Անիի 1038 թ. եկեղեցական ժողովին, որտեղ Դէոսկորոս Սանահնեցու կարծատեւ աթոռակալութեամբ (1037-1038) ընդմիջուելուց յետոյ Պետրոս Գետադարձը (1019-1054) կրկին գրաւեց Հայոց հայրապետական գահը («Եւ եղև ի թուականութեանս Հայոց ՆՁԷ [487=1038/1039 թ.] լինէր մեծ ժողով ի քաղաքն յԱնի եպիսկոպոսաց, հայրապետաց, կրօնաւորաց եւ վարդապետաց, ազատաց եւ իշխանաց իբրև չորք հազարաց. որ էր գլուխ ժողովոյն ձերունին Յովսէփ՝ կաթողիկոսն Աղուանից. եւ սուգ մեծ հասուցանէին Դէոսկորոսի... եւ ընկեցին յաթոնոյ հայրապետութեան... եւ հաստատեցին զՏէր Պետրոսն յաթոն հայրապետութեան իւրոյ, եւ եղև իսաղաղութիւն սուրբ եկեղեցւոյն Հայաստան աշխարհին»)143: Այսպիսով, փոքր ձեռնով լուծել խնդիրը՝ առաւել մեծ հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ Յովհաննէս Աղուանից կաթողիկոսն իրականում աթոռակալել է Մարկոսի (հաստատուած՝ 980-990-ական թթ.) եւ Յովսէփի (հաստատուած՝ 1030-ական թթ.) միջեւ, սակայն նրա անունն ուղղակի ինչ-որ պատահականութեամբ դուրս է մնացել աւելի քան 150 տարի անց Մխիթար Գօշի կազմած կաթողիկոսացանկից: Ինչ վերաբերում է Մատթէոս Ուռհայեցու պնդումներին՝ 960-970-ական թթ. Անիի եւս երկու եկեղեցական ժողովների՝ իբրև թէ Յովհաննէսի

րն Աստուծոյ տէր Մարկոս: Եւ յետ անոր տէր Յովսէփ...»: Հմմտ. Կիրակոս Գանձակեցի. *Պատմութիւն Հայոց*, Աշխատասիրութեամբ Կ. Ա. Մէլիք-Օհանջանեանի, Սր., 1961, գլ. Ժ, էջ 199 («Տէր Դաւիթ՝ ամս վեց. սա առ ձեռնադրութիւն յԱնանիայէ՝ Հայոց կաթողիկոսէ: Տէր Պետրոս, ամս վեցտասան: Տէր Մովսէս, ամս վեց. յառաջնորդութենէն Փառխոսոյ վահանց: Ապա տէր Մարկոս, այրն Աստուծոյ, եւ յետ անոր Յովսէփ...»):
 143 Մատթէոս Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 77-78:

մասնակցութեամբ կայանալուն, ապա կարելի է ենթադրել, որ պատմիչն իր երեւակայութեամբ է լրացրել-ձեւաւորել դրանք, ընդ որում՝ յենուելով կամ պարզապէս Գագիկ Ա-ի թագադրման արարողութեանը Փիլիպպէ արքայի ու Յովհաննէս կաթողիկոսի մասնակցելու մասին իր աղբիւրի՝ Յակոբոս Սանահնեցու հաղորդման վրայ (որը եւ սխալմամբ միախառնել է Անիի թագաւորանիստ հռչակելու 961 թ. արարողութեան հետ), կամ, որ թուում է աւելի հաւանական՝ ունենալով այդ աղբիւրի եւս գոնէ մէկ տեղեկութիւն (գուցէ՛ ինչ-որ չափով խաթարուած բնագրով)՝ Յովհաննէսի իրական մասնակցութեան մասին Անիի մի ուրիշ եկեղեցական ժողովի՝ հրաւիրուած Հայոց կաթողիկոսի ընտրութեան առիթով144: Իհարկէ, նկատի ունենք Սարգիս Սեւանցուն (992-1019) յաջորդած Պետրոս Գետադարձի ընտրութիւնը, որի մասին պատմիչն ունի զարմանալիօրէն հակիրճ գրառում, այն էլ՝ արդէն կաթողիկոսացած Պետրոսի ու Վասիլ կայսեր հանդիպմանը վերաբերող ծաւալուն պարբերութիւնից յետոյ (այդ պարբերութեամբ սկսւում է Յակոբոսի «ժամանակագրութեան»՝ մեզ հասած

բնագրական պատառիկը) եւ իրականից 3 տարի շեղուող թուագրումով. «Ի թուականութեանս Հայոց ՆՀԱ [471=1022/1023] մեռաւ Տէր Սարգիս կաթողիկոսն Հայոց եւ հաստատեաց յաթոն իւր հայրապետ զՏէր Պետրոս»145: Այնինչ՝ Յակոբոս Սանահնեցու կորսուած բնագրում այդ նշանակալի իրադարձութեան՝ նմանատիպ միւսներից ոչ պակաս հանգամանալից ներկայացուած լինելն աւելի քան ենթադրելի կարող է համարուել:

գ) «Դարբանդ-Կապանքի» արքայացանկի չորրորդ անուան՝ Սեւադայի համար պատմիչին հիմք է ծառայել, ամենայն հավանականութեամբ՝ Բաղք-Կապանի արքայ Սենեքերիմի (բնագրում՝ Սեմեքարիմ) հօր մասին ինչ-որ մի գրաւոր կամ բանաւոր իրական տեղեկատուութիւն՝ իբրև «Աղուանից թագաւոր»-ի: Այս տարբերակով պարզուում է, թէ ինչ հանգամանք է պատճառ դարձել Մատթէոս Ուռհայեցի պատմագրի համար՝ սխալմամբ միախառնելու «Աղուանից» եւ «Կապանք»-ի Հայոց արքայատոհմերը, որից յետոյ նա այդ «Դարբանդ աշնաեւ թեթեւօրէն կապել է «Դարբանդ աշխարհի» հետ («սահմանակից Օղաց եւ Ալանից»)»:

144 «Հայաստանի եւ Աղուանքի թագաւորութիւններն ու Բիզանդական կայսրութիւնը Ժ դարում» հայ-ֆրանսիական գիտածոյովուս (Երեւան, 2022 Սեպտեմբեր, 2010) ընթերցած «Հայ-աղուանից կաթողիկոսութիւնը Ժ դարի երկրորդ կէսին» գեկուցման մէջ Մելանիս Բալայեանը փորձեց անոյնի հիմնատրել Աղուանից Յովհաննէս կաթողիկոսի աթոռակալութիւնը 960-970-ական թթ. վերագրելու հնարարութիւնը (Դաւիթ եւ Պետրոս կաթողիկոսների միջեւ) ըստ Մատթէոս Ուռհայեցու տուեալների (հմմտ. Գագիկ Ա. Բարխուտարեանց, *Պատմութիւն Աղուանից*, հտ. Բ, վաղարշապատ, 1902, էջ 170-171): Սակայն թոււմ է, թէ վերը ներկայացուած մեր վարկածը թոյլ է տալիս աւելի ամբողջականօրէն մեկնաբանել Աղուանից Փիլիպպէ արքայի ու Յովհաննէս կաթողիկոսի հետ կապուած պատմական իրողութիւնների եւ դրանց մասին ԺԲ դարի պատմիչի պատկերացումների գոհէ մեծ մասի անհամապատասխանութեան խնդիրը:

145 Եթէ մեր վարկածը հաստատուի, ապա եւս մի լուսացուցիչ փաստարկով կ'ապացուցուի Կ. Իւզ-բաշեանի ճշգրտումը, ըստ որի Գագիկ Ա-ի մահը պետք է թուագրել 1017/1018-ով, այլ ոչ թէ՛ աւանդական 1020 թուականով, քանի որ աւանդական յաջորդում է Պետրոս Գետադարձի ընտրութեանը (1019 թ.) կայացած, ինչպէս վեր է հանում Ուռհայեցու (=Յակոբոս Սանահնեցու) ճշումներից, «հրամանաւ... Յովհաննիսի եւ Աշոտոյ Հայոց թագաւորացն» (տե՛ս ծմբ. 131 եւ 140):

Սակայն մեզ համար տուեալ դէպքում կարեւոր է ոչ այնքան Աղուանքի եկեղեցական շրջանակների պատասխան պահանջի պատմական հիմնաւորութիւնը, որքան այն, որ այդ պայմանը փաստօրէն ընդունուել է¹⁴⁹: Եւ սա, կարծես թէ, ակնյայտօրէն ցոյց է տալիս ոչ այլ ինչ, քան այն օրինակելի խնամքն ու խորաթափանցութիւնը, որոնցով ժամանակի ընտրախաւի պատասխանատու ներկայացուցիչները մօտենում էին էթնիկ համախմբութեան համար վտանգ ներկայացնող հասարակական միտումներին եւ անհրաժեշտութեան դէպքում չէին խորշում ընդհուպ ամենալուրջ փոխզիջումների դիմելուց: Այստեղ տեսնում ենք, որ փոխզիջումն արտայայտուել է անգամ այնպիսի նրբանկատ ոլորտում,

ինչպիսին եկեղեցական կառույցի աստիճանակարգն էր (իսկ վերեւում նշեցինք նմանատիպ մի իրողութիւն աշխարհիկ ոլորտում, երբ կենտրոնական Բագրատունեաց իշխանութիւնն սկսեց ճանաչել ու ինվեստիտուրայով ապահովել տեղական մանր թագաւորութիւններին): Ի դէպ, ինչպէս արդէն նկատուած է գրականութեան մէջ, հէնց Մատթէոս Ուռուայեցու՝ ԺԲ դ. առաջին կէտում շարադրուած «ժամանակագրութեան» արձանագրումների բովանդակութիւնից ու ոճից է ամենից լաւ երեւում (հմմտ., օր. «աշխարհն Աղուանից, որ ասի խորին աշխարհ Հայոց»¹⁵⁰), որ Ժ դ. վերջին իր՝ ըստ ամենայնի, բարձրակէտին հասած մասնատողական ճգնաժամային գործընթացը ԺԱ դարի ընթացքում թուլացել էր ու մարել¹⁵¹:

149 Հմմտ. А. А. Аюпян. *Албания-Алуанк*, էջ 262-263:

150 Մատթէոս Ուռուայեցի, *ժամանակագրութիւն*, էջ 230:
 151 Տե՛ս, օր.՝ Ա. Շ. Մնացականեան, *Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը*, էջ 221-233:

ՔՈՒՍՏԻ ԽՈՐՈՒԱՐԱՆԻ ՆՈՏԱՐՏԱ ԵՒ ԾԻՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՁ

Յովհաննես Խորիկեան

Ե. դարի հայոց աշխարհագրական երկի՝ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութիւնում Սասանեան Իրանի Քուստի Խորուարանի կամ Արեւմտեան՝ Կողմի մասին գրուած է. «Աշխարհ Պարսից: Պարսից աշխարհ ընդ չորս բաժանի այսպէս. Քուստի Խորասան, որ է կողմ արեւմտեայ, յորում աշխարհք ինն. Մայմասպտան, Միհրանքատակ, Քարշկար, Պարմական, Երան, Սանքար-Կաւատ, Նոտարտայ, Ծիրական, Մայծի-նըստեհ»²: Իսկ «Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութիւններից մէկում նոյն երկրամասը նկարագրուած է այսպէս. «Եղիմացիք, որ կոչին Քուստիկք խորայարանք, յելից կալով Դիղաթայ եւ ի մտից՝ Պարսից: Եւ ունին Եղիմացիքն աշխարհս փոքունս զայսոսիկ. զՆուժաստան, զՄաժ, զՄասպան³, զՄիհրան, զՔրտակ, զՔաշքար, զՔարմական, զԵրանաստան, զԿարկաւատ,

զՆոտատր, զԾիրական, զՄարծին, զԱրհեն: Ունի գետս երիս, քաղաքս հինգ՝ յորոյ մին է Գունդիշպուհ, յորում զաղնիւ շաքարն է գործեն. եւ կղզիս երկու հանդէպ իւր ՚ի պարսկային ծոցին»⁴: «Աշխարհացոյց»-ի համառօտ միւս խմբագրութիւնում էլ կարգուած ենք. «Երեսն եւ եւթներորդ՝ Եղիմացիք են, որ կոչին Քուստի Խորասարան, յելից կալով Դիղաթայ եւ ի մտից՝ Պարսից: Եւ ունին Եղիմացիք աշխարհս փոքունս, զայն ունին Եղիմացիք աշխարհս փոքունս, զայսոսիկ. զՆուժաստան, զՄայ, զՄասպան, զՄիհրանքատակ, զՔաշկար, զՊարմական, զՄիհրանքատակ, զՔարկաւատ, զՆոտարտայի-զԵրանասան, զՔարկաւատ, զՆոտարտայի-րական, զՄարծինսհեն: Ունի գետս երիս եւ քաղաքս հինգ՝ յորոց մին է Գունդիշպուհ, յորում զաղնիւ շաքարն գործեն: Ունի/կղզիս երկու հանդէպ իւր ՚ի պարսկային ծոցին»⁵: Սոյն աշխատանքի խնդիրը

1 Xwarwarān - «արեւմտք». տե՛ս В. Г. Луконин. *Древний и раннесредневековый Иран*, М., 1987, п. 139; J. Marquart. *Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*. Berlin. 1901, S. 17-18. հմմտ. Բ. Յարութիւնեան, *Մեծ Հայքի բրեշխութիւնների եւ բրեշխութեան հաստատութեան շուրջ*, ՀԱ, 2001, թիւ 1-12, վիեճակ, էջ 171, ծմթ. 39: Խորասանի անանութիւնը Խորասանի (xwarāsān - արեւելք) պատճառ է դարձել, որ Խորասան կամ Խարասան անունը սխալմամբ արտագրուէր Խարասան, որից էլ արդէն կը ստացուէր Խորասան:

2 Աշխարհացոյց Մովսէսի խորեհացոյ յաւելածովք նախնեաց, հրատ. Ա. Սուքրեան, Վեճեփիկ, 1881, էջ 40: Տե՛ս Աստեճագիրք Հայոց, Բ հատոր, Է. դար, Անթիլիսս-Լիբանան, 2003, էջ 2157:

3 Նոր ձեռագրերում՝ Մայպուպան (տե՛ս К. П. Патканов, *Армянская География VII века*, СПб, 1877, с. 65. Յաւելում՝ «Աշխարհացոյց Է դար», էջ 22): Միջոտ ձեւն է Մասպտան:

4 К. П. Патканов. *Армянская География...*, с. 64-66. Յաւելում՝ «Աշխարհացոյց Է դար», էջ 22-23: Քուստի Խորուարանի՝ որպէս Էլամացիների Բուստի Խորուարանի յիշատակութիւնը համառօտ խմբագրութեան պայմանաւորում է այն հանգրուանը, որ «Աշխարհացոյց»-ի յետագայ գրիչները Սասանեան Իրանի վարչական բաժանումը չորս երկրամասերի կամ կողմերի նույնացնումը չորս երկրամասերի հիմնական էթնիկական լեզուներին՝ Քուստի Կարկաւատ (Մարք), Քուստի Խորասան-Էլամացիներ (Պարսք), Քուստի Խորասան-արիներ (Արիք): Միեւնոյն ժամանակ, Խորասան-արիներ (Արիք): Միեւնոյն ժամանակ, ինչպէս «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութիւնից, Խորասանը՝ Էլամացիների երկիրը, որը Քուստի Նեմոջի մէջ էր, վարչական վերաճեալների հետեւանքով ընդգրկուած է Արեւմտեան Քուստի մէջ, ինչը նույնպէս պէտք է պատճառ հանդիսանար, որ Քուստի Խորուարանը համարուէր Էլամացիների երկրամաս:

5 Ա. Գ. Արքախանեան, *Անանիա Շիրակացոյ մատենագրութիւնը*, Երեւան, 1944, էջ 352: